Արձանագրություն N 2

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ, ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«12»փետրվար 2026թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արա Սողոմոնյան
Հանձնաժողովի անդամներ	Հարություն Արոյան, Լիլիթ Սարատիկյան
Հանձնաժողովի քարտուղար	Նելլի Ղազարյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ 15.01.2026թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի հունվարի 26-ին, ժամը 12:00-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ և 40-րդ հոդվածների համաձայն հրավերում կատարվել են փոփոխություններ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 02.02.2026թ ժամը 10:00-ն՝ Համաձայն «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին ՀՀ օրենքի 1.2 հոդվածի (փոփոխություն 20.01.2026թ ՀՕ-1-Ն): Փոփոխության հիմնավորում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մաս:

2026 թվականի փետրվարի 02-ին ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտեր են ներկայացրել հետևալ կազմակերպությունները

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«ԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ	Ք. Երևան, Շենգավիթ,Բագրատունյանց 16/4, 098 44 88 56 , ivapharm89@gmail.com	08625799
2	«ԱԷՄՋԻ» ՍՊԸ	Ք.Երևան, Աբովյան փ./23, 094 27 74 00 area_2018@bk.ru	02863111

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Սողոմոնյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են բոլոր փաստաթղթերը, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ վերջինիս կողմից ներկայացված հայտում առկա է անհապատասխանություն՝ ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) չի համապատասխանում հրավերի պահանջների և ենթակա է շտկման:

05.02.2026թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգով ծանուցել է մասնակցին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգով «Իվաֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկումը, և գնահատող հանձնաժողովը «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված հայտը գնահատել է բավարար:

Քանի որ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված դեղը գրանցված չէ ՀՀ-ում, իսկ գնման ընթացակարգի հրավերի պահանջով և պայմանագրի կատարման ընթացքում կիրառվում է ՀՀ կառավարության 02.05.2013թ.-ի թիվ 502-Ն որոշման պահանջները, ուստի պայմանագիր կնքելուց որակավորման և պայմանագրի ապահովունների ներակայացման հետ միաժամանակ «Իվաֆարմ» ՍՊԸ-ն չգրանցված դեղի համար պետք է ներկայացնի ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված հավաստող տեղեկանք՝ ՀՀ Կառավարության 23.02.2017թ.-ի Թիվ 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության կամ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու, ինչպես նաև «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 17-րդ կետով սահմանված ներմուծման մերժման հիմքերի բացակայության մասին, և կնքվելիք պայմանագրում կներառվի միայն հրավերի պահանջներին համապատասխանող դեղը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ա. Սողոմոնյան)

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

Հ/հ	Անվանումը	գնման քանակը	Միավորի գին	Նախահաշվային գին	մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները			կարգավիճակ
1	Տուբերկուլին/մաքրված,ստանդարտ նոսրացմամբ, լուծույթ ներարկման	51000	439,99	22439.490	«ԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ	22439490.00	0%	22439490.00	
					«ԱԷՄՋԻ» ՍՊԸ	24429000.00	0%	24429000.00	մերժված

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ա. Սողոմոնյան)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովը որոշեց հաղթող մասնակից ճանաչել «Իվաֆարմ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Սողոմոնյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաղթող մասնակից ճանաչել «Իվաֆարմ» ՍՊԸ-ն և կնքել պայմանագիր 22,439,490 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/23» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 13.02.2026թ.-ից մինչև 22.02.2026թ.-ն ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ա. Սողոմոնյան*

անդամներ՝ _____ *Հ. Արոյան*

_____ *Լ. Սարափիկյան*

քարտուղար՝ _____ *Ն. Ղազարյան*